TEACH FOR ARMENIA

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան «20» ապրիլի 2016թ.

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ»), ի դեմս Հիմնադրամի Հավաքագրման և Ընտրության տնօրեն՝ Թենի Ավակյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանը (այսուհետ՝ «Համալսարան»), ի դեմս ռեկտորի ԺՊ Սահակ Մինասյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն համագործակցության համաձայնագիրը (այսուհետ նաև «Համաձայնագիր»): Համաձայնագրում Հիմնադրամը և Համալսարանը անհատապես կանվանվեն նաև «Կողմ», իսկ միասնաբար նաև՝ «Կողմեր»:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Համաձայնագրով համակարգվում է Հիմնադրամի և Համալսարանի միջև համագործակցությունը երիտասարդ մասնագետների հավաքագրման, կրթությանն առնչվող միջոցառումների կազմակերպման և իրականացվող ծրագրերի (այսուհետ նաև՝ «Ծրագիր») առաջխաղացման ու տարածման ոլորտներում:

2. Կողմերի պատրաստակամությունը

2.1 Հիմնադրամը հայտնում է իր պատրաստակամությունը՝

2.1.1 Համալսարանի սաների համար ստեղծել հնարավորություն Հիմնադրամի կողմից իրականացվող Ծրագրի հավաքագրման աշխատանքներում բաց թողնել հեռախոսային հարցազրույցի փուլը:

2.1.2 Հիմնադրամին պատկանող առցանց հարթակներում նշել Համաձայնագրի առկայության մասին:

2.1.3 Հրավիրել Համալսարանի ներկայացուցիչներին ընթացիկ համապատասխան համաժողովներին:

2.1.4 Կազմակերպել վերապատրաստման համատեղ դասընթացներ Համալսարանի ուսանողների համար՝ ներգրավելով նաև Համալսարանի դասախոսական կազմը:

2.2 Համալսարանը հայտնում է իր պատրաստակամությունը՝

2.2.1 Առկա ուսանողների և շրջանավարտների շրջանում տարածել Հիմնադրամի գործունեությունը արտացոլող տեղեկատվություն:

2.2.2 Աջակցել Հիմնադրամին՝ կազմակերպելով ուսանողական հատվածի համար վերապատրաստման դասընթացներ:

2.2.3 Նպաստել Հիմնադրամի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը՝ կազմակերպելով հանդիպումներ ուսանողների հետ:

3. Լրացուցիչ դրույթներ

3.1 Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է տասը տարի ժամկետով: Համաձայնագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցանկացած պահի: Համաձայնագիրը կարող է նաև լուծվել միակողմանիորեն՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

3.2 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են իրականացվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համապատասխան փաստաթուղթ կնքելու միջոցով, որը կդառնա Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճը ենթակա է լուծման ՀՀ իրավասու դատարանի կողմից:

Հիմնադրամ	Համալսարան
«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
Հասցե՝ ՀՀ, Երևան 0002, Ամիրյան 18/3, բն. 12	Հասցե՝ ՀՀ, Գյումրի 3126, Պ. Սևակի 4
ՀՎՀՀ՝ 02645043	ՀՎՀՀ՝ 05502348
Հավաքագրման և Ընտրության տնօրեն՝ Թենի Ավակյան	Ռեկտորի ԺՊ՝ Սահակ Մինասյան
Կ.Տ.	Կ.Տ.